ՀՍԴԶ

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2/3

**Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «Սուպեր Մոնոլիտ» ՍՊԸ, «Նաիրի Շին» ՍՊԸ կոնսորցիումի միջև 2025թ. հուլիսի 08-ին կնքված N ՀՏԶՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/18-2 ծածկագրով Պետության կարիքների համար Կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

ք. Երևան «05» 03 2026 թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սուպեր Մոնոլիտ» ՍՊԸ, «Նաիրի Շին» ՍՊԸ կոնսորցիումն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս «Սուպեր Մոնոլիտ» ՍՊԸ-ի տնօրեն Պետրոս Պողոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, «Նաիրի Շին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սասուն Զաքարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով՝ Կողմեր, հիմք ընդունելով ՀՏԶՀ Ծրագրերի իրականացման և վերահսկողության վարչության զեկուցագիրը և Կողմերի միջև 2025թ. հուլիսի 08-ին կնքված «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծակքարի միջնակարգ դպրոցի վերանորոգման□ աշխատանքների պետական գնման **կնքված N ՀՏԶՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/18-2** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 3.1.9, 3.3.3, 8.5 և 8.16 կետերի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետի ընթացքը 2026 թվականի մարտի 05-ից կասեցնել:
2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:
3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:
4. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ 3 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածը հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|---|
| Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ | «Սուպեր Մոնոլիտ» ՍՊԸ | «Նաիրի Շին» ՍՊԸ |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 | Հասցե՝ ՀՀ, մ. Գեղարքունիք, Ծակքար 1 փ., տ. 20 | Հասցե՝ ՀՀ, մ. Գեղարքունիք, ք. Մարտունի, Մյասնիկյան փ., տ. 115 |
| ՀՎՀՀ՝ 00846441 | ՀՎՀՀ՝ 08424325 | ՀՎՀՀ՝ 08419076 |
| Հ/Հ՝ 900011058212 | Հ/h՝ 1510054668010100 | Հ/h՝ 220193335415000 |
| Կենտրոնական գանձապետարան | Բանկ՝ □ԱՐԱՐԱՏԲԱՆԿ□ ՓԲԸ | Բանկ՝ □Ակբա-բանկ□ ԲԲԸ Մարտունի մասնաճյուղ |
| Գործադիր տնօրեն | Տնօրեն | Տնօրեն |
| Սարգիս Բաղինյան | Պետրոս Պողոսյան | Սասուն Զաքարյան |

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար **«ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծակքարի միջնակարգ դպրոցի վերանորոգման»** աշխատանքների նպատակով կազմակերպված **N ՀՏԶՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/18-2** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **08.07.2025 թ.** կնքված **N ՀՏԶՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/18-2** պայմանագրում 05.03.2026 թ. կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ՝ | Ժամկետների կասեցման հիմքի առկայությունը |
| Փոփոխության նկարագրություն՝ | Կասեցվել է պայմանագրային ժամկետների հոսքը |
| Փոփոխության հիմնավորում՝ | Պայմանագրի 3.1.9, 3.3.3, 8.5 և 8.16 կետերը |

**Պատվիրատու՝Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ**

**ОБЪЯВЛЕНИЕ**
**об изменениях, внесенных в заключенный договор**

Армянский фонд территориального развития ниже представляет краткую информацию об изменениях, внесенных 05.03.2026 года в договор **N ՀՏԶՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/18-2** заключенный **08.07.2025 года** в результате процедуры закупки под кодом **N ՀՏԶՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2025/18-2** организованной с целью приобретения Строительных работ для своих нужд, и копию утвержденного в двухстороннем порядке документа, содержащего внесенное изменение.

| | |
|---|---|
| Причина возникновения изменения: | Наличие основания для приостановки сроков |
| Описание изменения: | Приостановлен поток контрактных сроков |
| Обоснование изменения: | Пункты 3.1.9, 3.3.3, 8.5 и 8.16 договора |

**Заказчик: Армянский фонд территориального развития**